ՏԱԱՐ - ԹԱՓԱՆՑԻԿ, ՄԱՏՉԵԼԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԳՆՈՒՄՆԵՐ

ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԵԿՈՒՅՑ

TAAP ՀԱՄԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

ՀԿ Կենտրոնն իր գործունեությունը մեկնարկել է 1994թ. որպես Ամերիկայի հայկական համագումարի ծրագիր: 2005թ.-ին ՀԿ Կենտրոնը գրանցվել է որպես տեղական հասարակական կազմակերպություն:

ՀԿ Կենտրոնը գործում է քաղաքացիական հասարակության զարգացման, մասնակցային կառավարման, կանանց և երիտասարդների իրավազորման, փաստահեն քաղաքականությունների ջատագովման և ոլորտային այլ հարցերի շուրջ:

ՀԿ Կենտրոնի առաքելությունն է սատարել քաղաքացու մասնակցությունը երկրի զարգացման գործընթացներում կարողությունների համալիր և շարունակական ընդլայնման միջոցով:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հիմնադրվել է 2001թ.-ի հուլիսի 1-ին Երևանում մի խումբ լրագրողների և իրավաբանների կողմից:

ԻԱԿ-ը տեղեկատվության ազատության ոլորտում մշտադիտարկումներ, օրենսդրական բարեփոխումներ և ուսուցումներ իրականացնող մասնագիտացված կառույց է: Այն նաև ծրագրեր է իրականացնում կոռուպցիայի դեմ պայքարի, էլեկտրոնային կառավարման, փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտներում:

ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

«Համայնքը և երիտասարդները» երիտասարդական, խորհրդատվական ՀԿ

Կազմակերպությունը հիմնվել մի խումբ ակտիվ, մասնագիտական բարձր որակներ ունեցողերիտասարդների կողմից: Կազմակերպությունն իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են հատկապես մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացմանը, ձեռներեցության խթանմանն ու իրազեկվածության բարձրացմանը: Կազմակերպությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում քաղաքական և քաղաքացիական կրթությանը:

Կազմակերպության առաքելությունն է նպաստել երիտասարդների դերի բարձրացմանը տեղական և միջազգային մակարդակներում, ստեղծելով նրանց համար հնարավորություններ, որտեղ նրանք կարող են ինքնադրսևորվել, կրթվել և տնտեսապես հզորանալ:

Սույն զեկույցը մշակվել է «Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ» (TAAP) ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերության (ՀԿ Կենտրոն) առաջնորդությամբ և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) ու «Համայնքը և երիտասարդները» երիտասարդական և խորհրդատվական հասարակական կազմակերպությունների հետ գործընկերությամբ կազմված կոնսորցիումի միջոցով:

«Թափանցիկ, մատչելի և հաշվետու գնումներ» ծրագիրն իրականացվում է «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում տրամադրված ենթադրամաշնորհի միջոցներով: ԴԱՏԱ ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և ԴԱՏԱ գործընկերների կողմից, Ամերիկայի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

Զեկույցում արտահայտված տեսակետները և նյութերի բովանդակությունը միմիայն ՀԿ Կենտրոնինն ու TAAP կոնսորցիումի անդամ կազմակերպություններինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Հետազոտող փորձագետ՝ Արմենուհի Բուռնազյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն 5

Ներածություն 6

Մոնիտորինգի մեթոդաբանությունը 7

Օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն 8

Բողոքարկման համակարգի միտումների վերլուծություն 13

Բողոքարկման ընթացակարգերի մասնակիցների շրջանում ուսումնասիրություն 23

Եզրակացություն և առաջարկություններ 24

Հավելված 27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային գնումների համակարգը ողջ աշխարհում համարվում է կոռուպցիոն դրսևորումների տեսանկյունից առավել ռիսկային ոլորտներից մեկը, ինչը պայմանավորված է համակարգում շրջանառվող խոշոր գումարներով և դրանից բխող չարաշահումների գայթակղությամբ: Ինստիտուտների թերզարգացվածության հետևանքով կոռուպցիոն դրսևորումների հաճախականությունը և հնարավորություններն առավել հավանական են անցումային տնտեսություն ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում:

Վերոնշյալ ռիսկերը կարող են դրսևորվել գնումների գործընթացի յուրաքանչյուր փուլում՝ սկսած պլանավորումից և տեխնիկական բնութագրերի նախագծումից մինչև պայմանագրի կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունը: Այս առումով արդյունավետ բողոքարկման համակարգի առկայությունը կարող է զսպաշապիկ հանդիսանալ նման ռիսկերի դրսևորման համար:

Վերջին տարիներին ՀՀ պետգնումների բողոքարկման համակարգին անդրադարձող սակավաթիվ ուսումնասիրություններից առավել ուշագրավը Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Եվրոպական Միության (ԵՄ) համատեղ նախաձեռնության՝ ՍԻԳՄԱ-ի[1] «Հանրային կառավարման սկզբունքները. ելակետային գնահատման զեկույց»-ն է[2] : Այս փաստաթղթում իրականացվել է բողոքարկման համակարգի անկախության և արդյունավետության գնահատում, որի արդյունքում բողոքները քննող մարմնի կարողությունները գնահատվել են բավարար: Սակայն մատնանշվել է բողոքարկման մարմնի՝ որպես ինստիտուտի ու դրա անդամների լիարժեք անկախությունն ապահովելու, ինչպես նաև Պետական գնումների համաձայնագրի[3] և Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի սկզբունքներին[4] և պահանջներին համապատասխանության խնդիրը:

Ընդհանուր առմամբ, գնումների բողոքարկման արդյունավետ, անկախ և վստահելի համակարգ ունենալու նպատակով պետք է բացառվեն բողոքարկման մարմնի շահերի բախման հնարավոր բոլոր իրավիճակները, իսկ ընդունված որոշումները պետք է լինեն թափանցիկ, մատչելի հանրության համար, արտաքին ազդեցություններից զերծ, անկողմնակալ, ինչպես նաև բխեն գնումների մասին օրենսդրությունից:

1 Support for Improvement in Governance and Management (Աջակցություն կառավարման և ղեկավարման բարելավմանը)

2 Հանրային կառավարման սկզբունքները. ելակետային գնահատման զեկույց, Հայաստան, 2019, 290 էջ; Տես՝ https://www.sigmaweb.org/publications/Baseline-Measurement-Armenia-2019-ARM.pdf, էջ 259-266

3 https://www.irtek.am/views/act.aspx?aid=92365

4 https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf

Հաշվի առնելով վերոնշյալ սկզբունքները՝ սույն մոնիտորինգի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվել գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից ընդունված որոշումները՝ օրենսդրությանը համապատասխանության և դրանցում առկա միտումների, ինչպես նաև ռիսկերի բացահայտման նպատակով: Մասնավորապես, հետազոտությունն ամփոփում է 2021 թ. հունվար--նոյեմբեր ժամանակահատվածում ՀՀ պետական գնումների բողոքարկման համակարգի քանակական և որակական վերլուծության արդյունքները: Նշվածի համատեքստում ստացված արդյունքների հիման վրա վեր են հանվել համակարգի ընթացիկ հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց բարելավման հնարավոր ուղիները, որոնք ամփոփվել են եզրակացությունների և առաջարկությունների տեսքով:

Հաշվետվությունը, բացի ներածական մասից, ներառում է նաև հետևյալ բաժինները՝ մոնիտորինգի մեթոդաբանությունը, օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը, բողոքարկման համակարգի միտումների վերլուծությունը, բողոքարկման ընթացակարգերի մասնակիցների շրջանում ուսումնասիրությունը և եզրակացությունն ու առաջարկությունները:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության համար տվյալների հավաքագրումն իրականացվել է 2021 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Հետազոտության համար որպես տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ Գնումների մասին օրենքը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը[1] , պետգնումների համակարգի պաշտոնական կայքի (www.gnumner.am) Բողոքարկում խորագրում ներկայացված փաստաթղթերը[2]: Այս աղբյուրներից ստացված տվյալները ենթարկվել են քանակական և որակական վերլուծության: Մասնավորապես, մանրամասն ուսումնասիրվել են 2021 թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից ընդունված որոշումները, որի համատեքստում ներկայացվել են ընդհանուր միտումները, վերլուծվել են պատվիրատուների դեմ ներկայացված բողոքների և մասնակիցներին գնումների սև ցուցակում ընդգրկելու հիմնական պատճառները, վեր են հանվել մասնակիցների կողմից բարձրաձայնվող խնդիրները և ռիսկերը:

1 https://gnumner.am/website/images/original/d4682e91.pdf

2 Վերլուծությունն իրականացվել է 2021 թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ կայքում հրապարակված տվյալների հիման վրա:https://gnumner.am/hy/page/boghoqneri_veraberyal_kayacats_oroshumner/

Պետգնումների և բողոքարկման համակարգի հանդեպ բողոքաբեր մասնակիցների ընկալումը գնահատելու նպատակով պատրաստված հարցաշարով իրականացվել են հեռավար հարցազրույցներ: [1]

Բողոքարկման որոշումների ուսումնասիրության արդյունքում ընտրվել է այդ գործընթացում ներգրավված 50 կազմակերպություն: Այս կազմակերպությունների հետ կապ է հաստատվել հարցազրույց անցկացնելու կամ հարցաթերթիկը լրացնելու նպատակով, սակայն միայն 20 կազմակերպություն է պատրաստակամություն հայտնել մասնակցել հարցախույզին:

Հարցազրույցների ամփոփ արդյունքները ներկայացված են սույն փաստաթղթի Բողոքարկման ընթացակարգերի մասնակիցների շրջանում ուսումնասիրություն և Հավելված բաժիններում:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գնումների գործընթացի բողոքարկման հետ կապված հիմնական դրույթները սահմանված են ՀՀ Գնումների մասին օրենքի (ԳՄՕ)[2] 46-51-րդ հոդվածներով և «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ Ֆինանսների նախարարի N 600-Ն հրամանով :[3]

Ընդհանուր առմամբ, բողոքները քննող անձինք[4] իրենց գործունեությունն իրականացնում են երկու ընթացակարգով.

1) բողոքարկման ընթացակարգ, որի դեպքում քննվում են գնումների ընթացքում պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ տարբեր շահագրգիռ անձանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքները;

2) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու ընթացակարգ, որի դեպքում քննվում են լիազորված մարմնի (Ֆինանսների նախարարության) համապատասխան գրությամբ ներկայացված պահանջները:

---

1 Հեռախոսային հարցազրույցների և Էլեկտրոնային փոստով հաղորդակցման միջոցով:

2 Ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 2017թ. ապրիլի 25-ին:

3 Ուժի մեջ է մտել 2018թ. դեկտեմբերի 18-ին:

4 2018թ. մայիսի 17-ի N 567-Ն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց թիվը պետք է լինի երկուսը՝ պաշտոնավարման հնգամյա ժամկետով:

Համաձայն ԳՄՕ 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, մասնակիցն ընդգրկվում է գնումների Սև ցուցակում, եթե `

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, օրենքի վերոնշյալ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին (ՖՆ), որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների Սև ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այնուհանդերձ, 2021 թ. օգոստոսի 18-ին ՀՀ Կառավարության նիստում հավանության արժանացավ «Գնումների մասին» ՀՀ օրենքում և առնչվող կից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթը: Նախագծերի մշակումն իրականացվել է գնումների համակարգի բարեփոխումների 3-րդ փուլի շրջանակում՝ նպատակ ունենալով կարգավորել պետգնումների ընթացակարգերին վերաբերող երկու հարց, այն է՝ բողոքարկման համակարգի համապատասխանեցումը միջազգային համաձայնագրերի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարմանը [1]և ազգային ընթացակարգերին օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումների կատարման ընթացակարգերի միասնականացմանը:

Սույն նախագծով նախատեսվում են բողոքարկման համակարգին վերբերող հետևյալ հիմնական փոփոխությունները՝

- ✓ Գնման ընթացակարգերի բողոքարկման լիազորությունը վերապահվելու է միայն դատարաններին՝ նման դեպքերի

1 «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր

Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով և ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերով ստանձնած պարտավորություններ

համար սահմանելով հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ: Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների դեմ բողոք ներկայացնելու հնարավորություն ընձեռվելու է միայն շահագրգիռ անձանց, իսկ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները բողոքարկելու հնարավորությունը՝ յուրաքանչյուր ցանկացողին:

✓ Գնումների հետ կապված վեճերը քննվելու են Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և լուծվելու են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 30 օրվա ընթացքում (նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով):

✓ Մասնակիցները ներառվելու են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (սև ցուցակում) լիազոր մարմնի կողմից՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Նախաձեռնվող փոփոխությունը հիմնավորվում է այն փաստով, որ արտադատական բողոքարկման համակարգն արդյունավետ չէ այն տեսակետից, որ կայացվող որոշումները ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց են, միմյանց հակասող, ինչի հետևանքով կամ դրանք բողոքարկվում են դատարաններում, կամ գնման ընթացակարգերը հայտարարվում են չկայացած, ինչը դրանք կազմակերպելու և անցկացնելու տեսակետից հանգեցնում են ծրագրերի ձախողման, դժգոհությունների և ֆինանսական կորուստների:

Ըստ վիճակագրության, տարեցտարի ավելանում են արտադատական կարգով քննված բողոքների վերաբերյալ կայացված որոշումները մասնակիցների կողմից դատական կարգով բողոքարկման դեպքերը և դա այն պարագայում, երբ գործող կարգավորումները չեն նախատեսում դատարանների կողմից դրանց հատուկ վարույթով քննելու ընթացակարգեր: Միաժամանակ, խնդրահարույց է նաև բողոք ներկայացնելու հնարավորություն ունեցող անձանց լայն շրջանակը: Ցանկացած՝ նույնիսկ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում բովանդակային առումով շահագրգռվածություն չունեցող, անձ կարող է բողոքարկել գնման ընթացակարգը և դրանով իսկ ձգձգել գործընթացները, այդ թվում նաև դիտավորյալ:

Գործող արտադատական բողոքարկման համակարգն ինչպես ինստիտուցիոնալ (անկախության), այնպես էլ կիրառելիության տեսակետից խնդրահարույց են համարել նաև ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետները: Հարկ է նշել, որ նախաձեռնված կարգավորումների շրջանակում ձևավորվելիք բողոքարկման համակարգի մոդելը քննարկվել է վերջիններիս հետ և համարվել է ընդունելի լուծում:

Տարբեր ուսումնասիրություններ ևս վկայում են, որ արտադատական բողոքարկման համակարգը թերություններ ունի: Մասնավորապես, Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ-ի իրականացրած հետազոտությամբ բացահայտվել են դեպքեր, երբ բողոքները քննող անձանց կողմից ընդունվել են ՀՀ օրենսդրության տեսանկյունից խնդրահարույց և միևնույն խնդրի շուրջ միմյանց հակասող որոշումներ: [1]

Այս առումով, բարեբախտաբար, առաջարկությունները հաշվի առնվեցին, և իրավիճակը մասամբ շտկվեց օրենսդրական փոփոխությամբ, մասնավորապես, մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց շտկելու հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորությունների մասով առկա անհամապատասխանությունները[2] :

Ընդհանուր առմամբ, պետգնումների բողոքարկման համակարգի 2021 թ. նախաձեռնված օրենսդրական փոփոխությունները միտված են ինստիտուցիոնալ և կիրառելիության տեսակետից բողոքարկման արդյունավետ համակարգ ունենալուն: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն պարունակում է որոշակի ռիսկեր:

Մասնավորապես, հարկ է նշել, որ ներկայումս աշխարհում իրավական համակարգը ձգտում է վեճերի արտադատական կարգով լուծման կարգավորմանը: Օրեցօր զարգանում և վեճերի լուծման առավել նախընտրելի եղանակ են դառնում արբիտրաժային դատարանները և հաշտարարները: ՀՀ-ում ևս կան արտադատական պրակտիկայի ներդրման լավ օրինակներ, որոնց շնորհիվ այժմ բազմաթիվ վեճեր մինչև դատարան հասնելը իրենց լուծումներն են ստանում Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից, ինչպես նաև արբիտրաժային

---

1 ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից 2019-2020 թթ. իրականացրած հետազոտությամբ արձանագրվել են որոշակի ռիսկային մոտեցումներ Ձինծառայողների ապահովագրության հիմնադրամին վճարվող դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունների առումով ընդունված որոշումներում: Մասնավորապես, բողոքները քննող անձ Լևոն Օհանյանը, դրոշմանիշային վճարների մասով պարտավորությունների առկայության բոլոր բողոքների վերաբերյալ կայացրել է որոշումներ ի օգուտ մասնակիցների, մինչդեռ, մյուս քննող անձ Գրիգոր Ներսիսյանը հիմնականում ընդունել է որոշումներ ի վնաս մասնակիցների՝ բավարարելով մասնակցին Սև ցուցակում ներառելու ընթացակարգերն և մերժելով մասնակիցների կողմից ներկայացված բողոքները: /ՀՔՀԱԿ ՀԿ, ՀՀ հանրային գնումների համակարգի մոնիտորինգային ամփոփ հաշվետվություն 2018-2019 թթ., էջ 43-46/

2 2019 թ. մայիսի 2-ին ընդունված և հունիսի 1-ից ուժի մեջ մտած Կառավարության 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N516-Ն որոշում, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=130644

դատարանում[1] : Այս առումով, թերևս բողոքարկման արտադատական համակարգից ընդհանրապես հրաժարվելու գաղափարը փոքր ինչ հակասական է:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ-ում դատարանները սովորաբար այնքան ծանրաբեռնված են, որ վեճի լուծման դատական ուղու ընտրությունը ենթադրում է գործի քննության բավական երկար ժամանակ: Թեև նոր փոփոխությամբ ակնկալվում է սահմանել պետգնումների բողոքների դեպքում հատուկ վարույթով որոշումների կայացման ընթացակարգ, այն է՝ հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ 30-օրյա ժամկետ (մեկ անգամ մինչև 10 օրացուցային օրով ժամկետը երկարաձգելու հնարավորությամբ), այս դրույթը ևս պարունակում է ռիսկեր: Մասնավորապես, հաշվի առնելով Երևանի ընդհանուր իրավասության դատարանի գերծանրաբեռնվածությունը և հաճախ այլ գործերի համար սահմանված քննության ժամկետների չպահպանումը, կասկած է առաջացնում պետգնումների վերաբերյալ բողոքները մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրելու հնարավորությունը:

Բացի այդ, գնումների հետ կապված վեճերի դեպքում հայցադիմումների ներկայացման համար պահանջվող գումարները նախկին վճարի համեմատ բավական խոշոր են և կարող են անհարկի խոչընդոտել բողոքների ներկայացումը:

Ի լրումն վերոնշյալի, նախատեսվող փոփոխությամբ մասնակցին գնումների Սև ցուցակում ներառելու որոշումը փաստացի վերապահվում է պատվիրատուի ղեկավարին, այն դեպքում, երբ ներկայումս այս գործընթացը իրականացվում է բողոքները քննող անձանց կողմից՝ հաշվի առնելով նաև մասնակիցների ներկայացրած կարծիքը և փաստարկները: Այսպիսով ստացվում է, որ մասնակիցը ներառվելու է այս ցուցակում միայն մի կողմի ներկայացրած փաստարկների ներքո և կկարողանա բողոքարկել այդ որոշումը միայն դատական կարգով: Մինչդեռ, ինչպես վկայում են բողոքները քննող անձանց որոշումների ուսումնասիրությունները, քիչ չեն այն դեպքերը, երբ մասնակիցը չի կատարում իր պարտավորությունները արտաքին գործոնների հետևանքով, որոնց թվում կարող են լինել ինչպես երկրում տիրող իրավիճակը կամ գնումների համակարգի տեխնիկական պատճառները, այնպես էլ պատվիրատուի գործողությունները/անգործությունը: Բացի այդ, այս դրույթը կարող է սահմանափակել մասնակիցների իրավունքները և նպաստել կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը:

Հաշվի առնելով այն փաստը, որ այս դեպքերը չեն կարող քննվել հատուկ հայցային վարույթի կարգով և ժամկետներում (համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն

1 ՀՀ առևտրաարդյունաբերական պալատին կից մշտապես գործող արբիտրաժային հաստատություն, http://www.arbitrage.am/

և լրացումներ կատարելու մասին նախագծի), կարծում ենք ավելի արդյունավետ և դյուրին կարող է լինել առնվազն այս մասով օգտագործել արտադատական ինստիտուտների հնարավորությունները: Ի դեպ, սա կարող է իրականացվել ոչ միայն ներկա արտադատական բողոքարկման համակարգը բարելավելու կամ նոր անկախ կառույց ստեղծելու, այլ նաև ՀՀ-ում գործող համապատասխան կառույցների ներուժն օգտագործելու միջոցով (օրինակ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և այլն):

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն պետգնումների պաշտոնական կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների[1] , 2021 թ. 11 ամիսների ընթացքում բողոքները քննող անձանց կողմից ընդունվել է շուրջ 1245 որոշում, որից 437-ը հանդիսացել են միջանկյալ որոշումներ[2] , 8-ի դեպքում կայացվել է առանց քննության թողնելու կամ ընթացակարգի քննությունը կասեցնելու որոշում (մինչև վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը կամ միջնորդություն բավարարելու նպատակով), իսկ մնացած 800-ի մասով կայացվել են մերժման, բավարարման կամ

Գծապատկեր 1.
Բողոքները քննող անձանց կողմից ընդունված որոշումները, 2019-2021 թթ., հունվար-նոյեմբեր



1 http://gnumner.am/hy/page/boghoqneri_veraberyal_kayacats_oroshumner/

2 Միջանկյալ որոշումների շրջանակներում հիմնականում ընդունվել են բողոքի քննությունը 10 օրացույցային օրով երկարաձգելու որոշումներ:

Աղյուսակ 1.
Մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումները, 2019-2021 թթ., հունվար-նոյեմբեր

մասնակի բավարարման որոշումներ[1] : 2019-2021 թթ. առաջին 11 ամիսների ընթացքում կայացված որոշումների կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 1-ում:

	Որոշումների քանակը, հատ			Մասնաբաժինն ընդհանուր որոշումներում, %		
	2019	2020	2021	2019	2020	2021
Բավարարվել է ցուցակում ներառումը	249	180	298	59	43	49
Բավարարվել է ցուցակում ներառումը	174	234	316	41	57	51
Ընդամենը	423	414	614	100	100	100

Գծապատկեր 2.
Բողոքները քննող անձանց կողմից մասնակիցներին Սև ցուցակում ներառելու մասով կայացրած որոշումների կառուցվածքը, 2021 թ. հունվար--նոյեմբեր

Ընդհանուր առմամբ, 2021 թ. առաջին 11 ամիսների ընթացքում ընդունվել է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (Սև ցուցակում) ներառելու վերաբերյալ 614 որոշում, ինչը գերազանցում է նախորդ տարիների նույն ժամանակաշրջանի ցուցանիշը (Աղյուսակ 1):



1 Վերլուծությունը իրականացվել է 2021թ. դեկտեմբերի 5-ի դրությամբ կայքում հրապարակված տվյալների հիման վրա:

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, 2021 թ. 11 ամիսների ընթացքում մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու վերաբերյալ մերժող որոշումները կազմել են ընդունված բոլոր որոշումների գրեթե կեսը (51%), ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նկատելիորեն պակաս է:

Վերոնշյալ որոշումների ուսումասիրությունը ցույց է տալիս, որ բողոքները քննող անձանց կայացրած որոշումների մասով առկա են հակառակ միտումներ. մասնավորապես, բողոքները քննող անձ Գրիգոր Ներսիսյանը մեծամասամբ ընդունել է մասնակիցներին Սև ցուցակում ներառումը մերժելու որոշումներ (58%), մինչդեռ մյուս քննող անձ Լևոն Օհանյանն ավելի շատ բավարարել է Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը (55%) (Գծապատկեր 2):

Հարկ է նշել, որ նույնատիպ բողոքների մասով երկու քննող անձանց կողմից ընդունվել են հիմնականում նմանատիպ որոշումներ:

Բողոքները քննող անձանց կայացրած որոշումների մանրամասն ուսումնասիրությունները վկայում են, որ գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունների խախտման առումով մասնակիցները (ընտրված կամ առաջին տեղ զբաղեցրած) հայտնվել են գնումների Սև ցուցակում հետևյալ հիմնական պատճառներով՝

- ✓ ընթացակարգի հրավերով նախատեսված գնային առաջարկ չներկայացնելու կամ դրանում թերությունների առկայության;
- ✓ ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու;

Աղյուսակ 2.
Գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառները, 2020-2021 թթ., հունվար-նոյեմբեր

	Քննված բողոքների քանակը		Բողոքների կառուցվածքն ըստ պատճառների, %	
	2020	2021	2020	2021
Հրավերով սահմանված փաստաթղթերի հետ կապված (անհամապատասխանությունների շտկում)	157	200	38%	33%
Պայմանագրի կնքումից կամ ընթ. մասնակցությունից հրաժարման, ապահովումներ չներկայացնելու հետ կապված	144	111	35%	18%
Պայմանագրային պարտավորությունների խախտման հետ կապված	96	284	23%	46%
Այլ	144	111	35%	18%
Ընդամենը	414	614	100%	100%

✓ հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու;

✓ որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու և/կամ օրենսդրությամբ սահմանված ապահովումները չներկայացնելու;

✓ պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու:

2020 թ. և 2021 թ. առաջին 11 ամիսների կտրվածքով գնումների Սև ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերի հիմնական պատճառների վերլուծության արդյունքները ներկայացված են

Գծապատկեր 3.
Բողոքները քննող անձանց Գնումների Սև ցուցակում ներառելու վերաբերյալ 2020 թ. առաջին 11 ամիսներին ընդունված որոշումների կառուցվածքն ըստ պատճառների



Աղյուսակ 2-ում:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ հիմքերով մասնակիցներին գնումների Սև ցուցակում ներառելու մասով ընդունված որոշումների վերլուծությունը վկայում է, որ բոլոր հիմքերի գծով մեծամասամբ ընդունվել են ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը մերժելու որոշումներ (Գծապատկերներ 3 և 4):

Ուշագրավ է, որ դիտարկվող երկու ժամանակահատվածում էլ առավել մեծ ուշադրությունն է դարձվել պատվիրատուների կողմից գնումների օրենսդրական կարգավորումներով սահմանված ընթացակարգերի պատշաճ պահպանմանը: Ուսումնասիրության ընթացքում հաճախ են հանդիպել դեպքեր, երբ պատվիրատուների կողմից թույլ են տրվել թերացումներ, մասնավորապես չեն պահպանվել Կառավարության 2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետով սահմանված պարտադիր դրույթները, ըստ որոնց՝



Գծապատկեր 4.
Գնումների Սև ցուցակում ներառելու վերաբերյալ 2021 թ. առաջին 11 ամիսներին ընդունված որոշումների կառուցվածքն ըստ պաճառների

Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Ի դեպ, այս առումով իրավիճակն ավելի վատթարացել է. 2021 թ. առաջին 11 ամիսներին այսպիսի թերացումներով 82 դեպք է եղել, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ միայն 11:

Բացի այդ, հանդիպել են դեպքեր, երբ պատվիրատուները խախտել են վերոնշյալ կարգի 16 և 17-րդ կետերը (տես՝ ստորև): Եվ չնայած մասնակիցների կողմից թույլ տրված խախտումների, Սև ցուցակում ներառելու տվյալ ընթացակարգերը մերժվել են, քանի որ ի սկզբանե համապատասխան գնման ընթացակարգերը կազմակերպվել են առանց իրավական հիմքի, այսինքն առանց գնումների պլանում գնման առարկայի առկայության կամ տեղեկագրում հրապարակված չլինելու պարագայում.

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում

Աղյուսակ 3.
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով ընդունված որոշումները, 2019-2021 թթ. առաջին 11 ամիսներ

	Որոշումների քանակը, հատ			Մասնաբաժինն ընդհանուր որոշումներում, %		
	2019	2020	2021	2019	2020	2021
Բավարարվել է (նաև մասնակի)	113	80	94	56	53	51
Մերժվել է	90	71	92	44	47	49
Ընդամենը	203	151	186	100	100	100

են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Որոշ դեպքերում էլ պատվիրատուների կողմից խախտվել են կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները (տես՝ ստորև), այսինքն մասնակիցներին Սև ցուցակում ներառելու ընթացակարգը նախաձեռնվել է մինչև պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելը (կամ նույն օրը), ինչը ենթադրում է, որ մասնակիցները պատշաճ ծանուցված չեն եղել.

33. Պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ՝

17) պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված

Գծապատկեր 5.
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքները քննող անձանց կայացրած որոշումների արդյունքները, 2021 թ. հունվար-նոյեմբեր



պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

Աղյուսակ 4.
Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառները, 2020 թ. և 2021 թ. առաջին 11 ամիսներ

	Քննված բողոքների քանակը		Բողոքների կառուցվածքն ըստ դրա հիմքերի, %	
Բողոքի հիմքը	**2020**	**2021**	**2020**	**2021**
Հրավերով սահմանված փաստաթղթերի և հայտերի գնահատման հետ կապված	62	85	41	46
Հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ	35	49	23	26
Գնումների պլանի հրապարակման հետ կապված	18	10	12	5
Այլ	36	42	24	23
Ընդամենը	151	186	100%	100%

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, չնայած մասնակիցների կողմից թույլ տրված խախտումների, բոլոր այսպիսի դեպքերում բողոքները քննող անձինք ընդունել են որոշումներ ի օգուտ մասնակիցների, այն է՝ մերժել են սև ցուցակում ներառելու ընթացակարգերը:

Վերոնշյալ հիմքերով ներկայացված բողոքների առկայությունը վկայում է պատվիրատուների կարողությունների հետ կապված խնդիրների մասին: Բացի այդ, այստեղ առկա են որոշակի ռիսկեր, քանի որ չի բացառվում, որ այսպիսի թերացումները կարող են լինել միտումնավոր՝ պատվիրատուների և գնումների գործընթացի մասնակցների/մատակարարների միջև ձեռք բերված ոչ օրինավոր համաձայնությամբ: Հաշվի առնելով այս հանգամանքը, կարծում ենք, առավել արդյունավետ կլինի այս ընթացակարգերի ավտոմատացումը կամ պատվիրատուների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը:

Համաձայն պետգնումների կայքի Բողոքարկման բաժնում ներկայացված տվյալների, պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների մասով 2021 թ. առաջին 11 ամիսների ընթացքում ընդունվել է 186 որոշում, ինչը

Գծապատկեր 6.
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով 2020 թ. առաջին 11 ամիսներին ընդունված որոշումների կառուցվածքըն ըստ բողոքի հիմքերի



գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

Պատվիրատուների գործողությունների դեմ դիտարկվող ժամանակաշրջաններում ներկայացված բողոքները մեծամասամբ բավարարվել են (Աղյուսակ 3):

Պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով 2021 թ. առաջին 11 ամիսների ընթացքում բողոքները քննող անձանց կայացրած որոշումների վերլուծության արդյունքները ներկայացված են Գծապատկեր 5-ում: Ինչպես Սև ցուցակում ներառելու վերաբերյալ

Գծապատկեր 7.
Պատվիրատուների գործողությունների դեմ բողոքների մասով 2021 թ. առաջին 11 ամիսներին ընդունված որոշումների կառուցվածքըն ըստ բողոքի հիմքերի



կայացված որոշումների պարագայում, այս դեպքում ևս, բողոքները քննող անձանց կայացրած որոշումների մասով առկա են հակառակ միտումներ: Մասնավորապես, բողոքները քննող անձ Գրիգոր Ներսիսյանը մեծամասամբ (55%) բավարարել է պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքները, մինչդեռ մյուս քննող անձ՝ Լևոն Օհանյանը, ավելի շատ (53%) մերժել է այսպիսի բողոքները:

Ընդհանուր առմամբ, այս բողոքների մասով ընդունված որոշումների մեջ ակնհայտ ռիսկային մոտեցումներ չեն արձանագրվել, չնայած մի քանի բողոքի մասով կան վիճարկելի փաստարկներ, որոնք սակայն

Աղյուսակ 5.
Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2020 թ. առաջին 11 ամիսներ

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավարարվել է	Մերժվել է	Ընդամենը
1	ՊՆ	6	5	11
2	Նորք-Մարաշ ԲԿ ՓԲԸ	6	4	10
3	Երևանի քաղաքապետարան	5	4	9
4	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	4	3	7
5	Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ	4	3	7
6	Քաղաքաշինության կոմիտե	4	2	6
7	Ոստիկանություն	5	0	5
8	ՀԱԷԿ ՓԲԸ	3	2	5
9	ՊԵԿ	2	3	5
10	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	1	3	4
	Ընդամենը նշվածը	**40**	**29**	**69**
	Ընդամենը հունվար-նոյեմբերին	**80**	**71**	**151**
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	**50**	**41**	**46**

արդյունավետ չեն օգտագործվել մասնակիցների կողմից սեփական իրավունքները պաշտպանելու համար:

2020 թ. և 2021 թ. առաջին 11 ամիսների կտրվածքով պատվիրատուների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ ներկայացված բողոքների հիմնական պատճառների վերլուծության արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Ընդհանուր առմամբ, պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների վերլուծությունը

վկայում է, որ տարբեր հիմքերով բողոքները հիմնականում լիովին կամ մասնակի բավարարվել են:

Հատկապես ուշագրավ է, որ հրավերում թերությունների և խտրական մոտեցումների առկայության վերաբերյալ ներկայացված բողոքների մասով դիտարկվող երկու ժամանակաշրջանում էլ մեծամասամբ ընդունվել են բավարարման որոշումներ, ինչի արդյունքում պատվիրատուների գնահատող հանձնաժողովները պարտավորվել են տվյալ ընթացակարգերը հայտարարել չկայացած (Գծապատկերներ 6 և 7):

Ինչպես Սև ցուցակում ներառելու վերաբերյալ ընդունված որոշումների, այնպես էլ պատվիրատուների գործողությունների դեմ ներկայացված բողոքների մասով ընդունված որոշումների պարագայում հաճախ են հանդիպել դեպքեր, երբ պատվիրատուների կողմից թույլ են տրվել թերացումներ, մասնավորապես չեն պահպանվել Գնումների գործընթացի կազմակերպման կարգով սահմանված դրույթները և հատկապես կարգի 16 և 17-րդ կետերը, այն է՝ գնման ընթացակարգերը

Աղյուսակ 5.
Պատվիրատուներ, ում գործողությունները առավել հաճախակի են բողոքարկվել, 2020 թ առաջին 11 ամիսներ

	Պատվիրատու ում գործողությունները բողոքարկվել են	Բավարարվել է	Մերժվել է	Ընդամենը
1	ՊՆ	13	12	25
2	Նորք-Մարաշ ԲԿ ՓԲԸ	5	8	13
3	Երևանի քաղաքապետարան	5	6	11
4	ՀԱԷԿ ՓԲԸ	6	3	9
5	Վանաձորի ԲԿ ՓԲԸ	3	2	5
6	ՊԵԿ	2	3	5
7	Ոստիկանություն	4	0	4
8	Վարչապետի աշխատակազմ	0	4	4
9	ԱԻՆ	2	1	3
10	Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա հիմնադրամ	1	2	3
	Ընդամենը նշվածը	**41**	**41**	**82**
	Ընդամենը հունվար-նոյեմբերին	**94**	**92**	**186**
	Մասնաբաժինը ընդհանուրում, %	**44**	**45**	**44**

կազմակերպվել են առանց գնումների պլանում գնման առարկայի առկայության կամ տեղեկագրում հրապարակելու (կամ գնման ընթացակարգի/մրցույթի հայտարարման նույն օրը հրապարակվելու), ինչը

ենթադրում է, որ դրանք պետք է հայտարարվեն չկայացած:

Աղյուսակներ 5-ում և 6-ում ներկայացված է այն պատվիրատուների ցանկը, որոնց գործողությունների դեմ մասնակիցներն առավել հաճախակի են բողոք ներկայացրել:

Ընդհանուր առմամբ, 2020 և 2021 թթ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում 10 պատվիրատուների դեմ ներկայացված բողոքները կազմել են տվյալ ժամանակաշրջանի ընդհանուր բողոքների համապատասխանաբար՝ 46 և 44%-ը:

Վերոնշյալ աղյուսակներում բերված տվյալներից երևում է, որ այս ցանկի պատվիրատուների առաջին եռյակը պահպանվել է, սակայն նախորդ ժամանակաշրջանի համեմատ նրանց գործողությունների դեմ ներկայացված բողոքների քանակը ավելացել է: Հատկապես ակնհայտ է Պաշտպանության նախարարության գործողությունների դեմ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ներկայացված բողոքների ավելի քան կրկնապատկումը:

Բողոքարկման համակարգում առկա խնդիրների առավել խորը ուսումնասիրության համար կարևոր է նաև գնահատել պետգնումների գործընթացների մասնակիցների վերաբերմունքը համակարգի նկատմամբ: Այդ նպատակով, սույն հետազոտության շրջանակներում իրականացվել են հարցազրույցներ բողոքարկման գործընթացում ներգրավված մի շարք ընկերությունների հետ[1]: Հարցազրույցների ամփոփ արդյունքները ներկայացված են Հավելված բաժնում:

Ընդհանուր առմամբ, հարցվածների մեծ մասը ներկայացնում են միջին չափի կազմակերպություններ, որոնց գործունեության հիմնական ուղղությունն ապրանքների մատակարարումն է: Հարցված կազմակերպությունների գերակշիռ մասն ակտիվորեն մասնակցում և հաճախ հաղթում է պետգնումների ընթացակարգերում: Նրանց ընդհանուր պորտֆելում պետության մասնաբաժինը բավական խոշոր է և կա գնումներով զբաղվող առանձին մասնագետ: Հարցումները վկայում են, որ գնումների մասնակիցները հիմնականում խուսափում են պատվիրատուներից պարզաբանումներ պահանջել, ինչը մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ պատվիրատուների հետ ոչ ֆորմալ շփման արդյունքում մասնակիցները հաճախ հակասական պատասխաններ են ստացել և չեն գոհացել տրված պարզաբանումներից: Եղել են դեպքեր, երբ պատվիրատուն հավաստիացրել է որոշակի

1 Հետազոտության արդյունքում ընտրվել է 50 կազմակերպություն, որոնց հետ կապ է հաստատվել հարցազրույց անցկացնելու կամ հարցաթերթիկը ուղարկելու նպատակով, սակայն միայն 20 մասնակից է լրացրել հարցարանը:

ընթացքի վերաբերյալ, սակայն ի վերջո ընթացակարգն այլ հանգուցալուծում է ստացել և մասնակիցը փաստորեն հայտնվել է ոչ բարենպաստ իրավիճակում (մի դեպքում հայտ չի ներկայացրել, մյուս դեպքում՝ հայտնվել է Սև ցուցակում):

Հարցվածների գերակշիռ մասը ներկայիս բողոքարկման համակարգը գնահատում է ոչ արդյունավետ, սակայն նրանցից ոչ բոլորն են դրական վերաբերում լիովին դատական համակարգին անցնելու օրենսդրական նախաձեռնությանը: Ի դեպ, նրանցից քչերն էին տեղյակ նախագծից և մեծ մասը դրան ծանոթանալուց հետո միայն կարողացավ կարծիք արտահայտել, ինչը վկայում է, որ սույն օրենսդրական փոփոխության հանրային իրազեկումը այնքան էլ արդյունավետ չի իրագործվել: Այնուհանդերձ, բողոքարկումը դատական համակարգով իրականացնելը հիմնականում դրական արձագանք է ստացել հարցվածների շրջանակում:

Ներկայիս բողոքարկման ընթացակարգերի ժամանակատարությունը և վճարը մեծամասամբ ընդունելի են մասնակիցների համար, մինչդեռ բողոքները քննող անձանց հիմնավորումների մասով կարծիքները միանշանակ չեն և այն ավելի շատ գնահատվել է որպես թույլ կողմ:

Հարցման վերջին հարցին՝ պետգնումների և բողոքարկման համակարգը բարելավելու ուղղությամբ առաջարկությունների մասով, մասնակիցների միայն մի մասն են պատասխանել: Ընդհանուր առմամբ, պատասխանների մեծ մասում նշվել է պետգնումների էլեկտրոնային համակարգի, հատկապես էլեկտրոնային աճուրդի տեխնիկական խնդիրները շտկելու, մրցույթների տեխնիկական բնութագրերը առավել գրագետ և ոչ խտրական ձևակերպելու, պայմանագրային պայմանները ավելի ճկուն դարձնելու, ինչպես նաև բանակցային ընթացակարգերում գնային առաջարկների մասով որոշակի կարգավորման մեխանիզմներ ներդնելու անհրաժեշտությունը (դեմպինգից խուսափելու համար): Բողոքարկման համակարգի բարելավման համար առաջարկվել է փոփոխել քննող անձանց հինգ տարի ժամկետով պաշտոնավարելու դրույթը՝ որոշումների ընդունման առավել պատասխանատու դրսևորմանը նպաստելու նպատակով: Առաջարկվել է նաև ներդնել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնք կկանխեն բողոքները քննող անձանց որոշումների կողմնակալությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ, պետական գնումների բողոքարկման համակարգի 2022 թ. սկզբին ընդունված օրենսդրական փոփոխությունները միտված են ինստիտուցիոնալ և կիրառելիության տեսակետից բողոքարկման արդյունավետ համակարգ ունենալուն: Այնուամենայնիվ, բողոքարկման արտադատական համակարգից ընդհանրապես հրաժարվելու գաղափարը պարունակում է որոշակի

ռիսկեր:

Մասնավորապես, համաձայն այս փոփոխությունների՝ մասնակցին գնումների Սև ցուցակում ներառելու որոշումը փաստացի վերապահվում է պատվիրատուի ղեկավարին, և ստացվում է, որ գործընթացն իրականացվում է միայն մի կողմի ներկայացրած փաստարկների ներքո և այդ որոշման բողոքարկումը կարող է իրականացվել միայն դատական կարգով: Մինչդեռ, ինչպես վկայում են բողոքները քննող անձանց որոշումների ուսումնասիրությունները, քիչ չեն լինում այն դեպքերը, երբ մասնակիցը չի կատարում իր պարտավորությունները արտաքին գործոնների հետևանքով և օբյեկտիվ պատճառներով: Ի լրումն, այս դրույթը փաստացի սահմանափակում է մասնակիցների իրավունքները և կարող է նպաստել կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը:

Բարեփոխման ուղղություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս աշխարհում իրավական համակարգում օրեցօր զարգանում և վեճերի լուծման առավել նախընտրելի եղանակ են դառնում արբիտրաժային դատարանները և հաշտարարները, առաջարկվում է, որ առնվազն գնումների Սև ցուցակում ներառելու ընթացակարգերի մասով ընդունված փոփոխությունը վերանայվի և դիտարկվի արտադատական ինստիտուտների հնարավորություններն օգտագործելու այլընտրանքը: Դա կարող է իրականացվել ոչ միայն նոր անկախ արտադատական կառույց ստեղծելու, այլև ՀՀ-ում գործող համապատասխան կառույցների (օրինակ՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և այլն) ներուժն օգտագործելու միջոցով:

ՀՀ պետգնումների օրենսդրությունը հստակ չի սահմանում տեղեկատվության հրապարակման ձևաչափը, ինչը երբեմն սահմանափակում է տեղեկատվության վերարտադրության/վերամշակման և վերլուծության հնարավորությունը: Սա հատկապես վերաբերում է բողոքարկման որոշումների հրապարակման ձևաչափերին, քանի որ ներկայումս կիրառվող ձևաչափի դեպքում տեղեկատվության վերամշակումը և օգտագործումը բավականին ժամանակատար և աշխատատար են: Բացի այդ, փոփոխությունից հետո դատական համակարգով ընդունված որոշումների թափանցիկությունը ապահովելու կարիք է առաջանում:

Բարեփոխման ուղղություն

Կարծում ենք պետգնումների օրենսդրությամբ պետք է սահմանվեն նոր համակարգով իրականացվող բողոքարկման որոշումների թափանցիկության ապահովման և հրապարակման դրույթները, այդ թվում նաև ձևաչափերի մասով:

Այս առումով, կարելի է օգտվել մի շարք երկրների փորձից: Օրինակ, Ուկրաինայի օրենսդրությունը հստակորեն սահմանում է այն

ձևաչափը, որը պետք է օգտագործվի պետական գնումների մասին տեղեկատվության հրապարակման ժամանակ: Մասնավորապես, Ուկրաինայի պետգնումների օրենքի 5-րդ հոդվածը նշում է, որ դա պետք է կատարվի բաց տվյալների ձևաչափով (առանձին օրենքով սահմանված), այնպիսի ձևաչափով, որը թույլ կտա անվճար ու ավտոմատ թվային եղանակով վերամշակել և օգտագործել տեղեկատվությունը: Կոստա Ռիկայի պետգնումների օրենքի 40-րդ հոդվածը սահմանում է, որ կենտրոնացված պետական գնումների կայքը պետք է վերարտադրի տեղեկատվությունը այնպիսի թվային ձևաչափերով, որը թույլ կտա հանրությանը բեռնել, պատճենել, վերափոխել և վերաօգտագործել այն:

Պետգնումների շրջանակում ներկայացված բողոքների մասով կայացված որոշումների միտումների և պատճառների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ են հանդիպում նույնանման դեպքեր, որոնց մասով կայացվում են հիմնականում նմանատիպ, ոչ միշտ օբյեկտիվ, որոշումներ: Մասնավորապես, պատվիրատուների կողմից չեն պահպանվում պետգնումների օրենսդրությամբ սահմանված որոշակի դրույթներ և թույլ են տրվում հիմնականում նույնատիպ թերացումներ: Կարծում ենք, որ այս միտումը կպահպանվի նաև դատական համակարգով իրականացվող բողոքարկման գործընթացների պարագայում:

Բարեփոխման ուղղություն

Պատվիրատուների կարողությունների բարձրացման առումով և բողոքների քանակի կրճատման համար առաջարկվում է անցկացնել վերապատրաստումներ՝ գնահատող հանձնաժողովների կողմից հաճախակի թույլ տրված վրիպումների/սխալների վերաբերյալ հավելյալ բացատրություններ և պարզաբանումներ տրամադրելով: Բացի այդ, արդյունավետ կլինի մշակել հաճախ հանդիպող և նախատիպային դարձած դեպքերի քննության վերաբերյալ ուսուցողական նյութեր և՛ պատվիրատուների, և՛ մասնակիցների իրազեկման համար:

Բողոքարկման ընթացակարգերի մասնակիցների շրջանում ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը պատշաճ տեղեկացված չէ օրենսդրական փոփոխություններից, ինչը վկայում է այդ մասով հանրային իրազեկման խնդիրների մասին:

Բարեփոխման ուղղություն

Պետգնումների օրենսդրական փոփոխությունների մասով անհրաժեշտ է նախաձեռնել հանրային իրազեկման արդյունավետ եղանակներ, որպեսզի դրանում առկա դրույթների վերաբերյալ տրվեն պատշաճ բացատրություններ՝ հանրության շրջանում թյուրըմբռնումներից և դժգոհություններից խուսափելու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բողոքարկման ընթացակարգերի մասնակիցների հետ հարցազրույցի արդյունքները



1. Ի՞նչ գործունեությամբ է զբաղվում ձեր կազմակերպությունը:



2. Ձեր կազմակերպության աշխատակիցների թվաքանակը:



3. Ունի արդյո՞ք ձեր կազմակերպությունը առանձին գնումների մասնագետ:



4. Ինչպիսի՞ն է պետության մասնաբաժինը ձեր կազմակերպության ընդհանուր պորտֆելում:



5. Մոտավորապես քանի՞ պետգնումների ընթացակարգի/լոտի եք մասնակցել 2021 թ. 11 ամիսների ընթացքում:



6. Քանի՞ ընթացակարգում/լոտում եք հաղթող ճանաչվել 2021 թ. 11 ամիսների ընթացքում:



7. Ձեր հայտերը մերժվե՞լ են: Եթե այո, ըստ Ձեզ, որքանո՞վ օբյեկտիվ/հիմնավորված են եղել մերժման հիմքերը:



8. Դիմել եք արդյո՞ք պատվիրատուներից պարզաբանումներ ստանալու համար: Եթե այո, գոհացրե՞լ են ստացված պարզաբանումները Ձեզ:



9. Արդյունավե՞տ եք համարում ներկայիս բողոքարկման համակարգը:
10. Ձեր կարծիքով որո՞նք են ներկայիս բողոքարկման համակարգի հիմնական ուժեղ և թույլ կողմերը:
11. Ինչպե՞ս եք վերաբերում բողոքարկման համակարգի վերաբերյալ նախատեսվող վերջին օրենսդրական փոփոխություններին (բողոքարկումը դատական համակարգով իրականացնելու):
12. Ի՞նչ կառաջարկեիք ընդհանուր առմամբ պետգնումների և բողոքարկման համակարգը բարելավելու համար:

- ✓ Շտկել Էլեկտրոնային աճուրդի տեխնիկական խնդիրները
- ✓ Մրցույթների տեխնիկական բնութագրերն առավել գրագետ և ոչ խտրական ձևակերպել
- ✓ Պայմանագրային պայմանները ավելի ճկուն դարձնել
- ✓ Բանակցային ընթացակարգերում ներդնել որոշակի կարգավորման մեխանիզմներ գնային առաջարկների մասով (դեմպինգից խուսափելու համար)
- ✓ Ներդնել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնք կկանխեն բողոքները քննող անձանց որոշումների կողմնակալությունը

Կայք: **www.ngoc.am**
Էլ. հասցե: **info@ngoc.am**
Հեռ.: **+374 91 743315**
Հասցե: **ՀՀ, ք. Վանաձոր, Խորենացի 6/1**

Կայք: **www.foi.am**
Էլ. հասցե: **foi@foi.am**
Հեռ.: **+374 91 407836**
Հասցե: **ՀՀ, Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ**

Էլ. հասցե: **communityandyouth@gmail.com**
Հեռ.: **+374 93 261317**
Հասցե: **ՀՀ, ք. Թալին Խանջյան 9**